


7582

910.4  
n-34

545



828

32

338

202.  
111  
14. 25.

910.4  
14-34  
6367

# ԻՄ ՃՈՆԱՊԵՀՆՈՐԴՈՒԹԵԱՆ

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

Գ. ԽԱՑԻՍԵԱՆ

(1006  
14-34)

Արտատպած „ՓՈՐՁ“ հանդիսից

2004

2012

ԹԻՖԼԻՍ

Հ. ԿԱՖԻԱԶԵԱՆՑԻ ԵՐ. ԸՆԿ. ՏՊԱՐԱՆ.

1880

# ԻՄ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ

## ՖԻՇԱՑԱԿԱՆ ԱՎԱԾԱՎ

ՄԻ ՔԱՆԻ ԲՈՊԵ ԳԵՐՄԱՆԻՈՅ ԵՐԿԱԹՈՒՂԻԻ ՄԵԿ ԻԶԵՒԱՆԻ ։)  
ՄԷՋ

Дозволено цензурою. 1880 г., 5 апреля, Тифлис.



16550-68

1869 թուին ամսոռուան ճանապարհորդութեանս ժամանակը հիւսիսային գերմանիայից ուղղեցի ևս իմ ընթացքը գէպի հարաւ արեմուտք, մոտպիր լինելով գնալ ֆրանցէնսբադ, որ բոհեմի ոյի եռելի համբային ջրերից մէկն է։ Շողեգնացքը<sup>2)</sup> թողեց ինձ յանակարծ ֆրանցէնսբադից երեք ժամ հեռաւորութեան վերայ մէկ իջեւանի մէջ, ինքը զիմելով ուղղակի գէպի հարաւ, և ևս այսակեղ պիտի սպասէի մօտ երկու ժամ, մինչև որ միւս կողմիցը զար մէկ ուրիշ շողեգնացք և տանէր ինձ ֆրանցէնսբադ։

Այս իջեւանը, որտեղ ուրեմն ևս պիտի սպասէի մօտ երկու ժամ, մի առանձնացած շինութիւն էր զաշտի մէջ, ոչ հեռու մէկ փոքրիկ զիւղեց, ինքն ևս փոքրիկ շինուած, փոքրիկ բիւֆէտով և առհասարսկ շատ համեստ սարք ու կարգով, մինչև անգամ սպասելի դահլիճի մէջ սեղանի վրայ զրած էր միայն տեղական օրագրի մէկ թերթ։ Յայտնի է, թէ ինչպէս ձանձրավի է ճանապարհորդի համար ի գուր սպասել մէկ իջեւանի մէջ, մանաւանդ զգալի է այդ աշկամայ հանգստութիւնը երկաթէ ճանապարհով արագ ընթանալուց յետոյ, առաւել ևս՝ երբ ճանապարհորդը գնահատումէ ժամանակը. իսկ ինձ համար այս անգամ սպասելը աւելի զժուար էր, որովհետեւ շտապումէի տեսնուելու հիւանդ քրոջս հետ, որնոր մէկ տարի առաջ գնացել էր Եւրոպայ բժշկուելու և ևս անհամբերութեամբ շտա-

1) La station.

2) Le train.

պումէի նորա հետ տեսնուելու յիշած ջրերու վերայ: Կամայ ակա-  
մայ նստեցայ սեղանի մօտ և վերառայ օրագիրը կարդալու:

Օրագրի սուղ թերթերը կարդացուեցան շուտով, բայց ժամաւ-  
նակը շատ դանդաղէր անցնում. անդադար ժամացոյց նայելուց  
ձանձրանալով, չունենալով ոչինչ ուրիշ զբաղմունք և սպասելի փոք-  
րիկ դահլիճը քայլերովս շատ անգամ չափելուց յետոյ նստեցայ վերը-  
տին սեղանի մօտ և մտածմունքի մէջ մտայ՝ երևակայութեամբս տե-  
ղափոխուելով այն կողմերը ուր որ մտադիր էի գնալու: Յանկարծ  
և նոր շոգեկառքի<sup>1)</sup> շուրցը: Ինձ ասին, թէ մօտենումէ շոգեգնացքը:  
որնոր գալիս է ֆրանցէնսբաղից: Մէկ քանի բովէից յետոյ շողեգնաց-  
քը կանգնեց իջևանի առաջ և մեծ բազմութիւն գուրս եկաւ կառքերից  
և մտաւ սպասելի դահլիճը: Ի հարկէ որ շոգեգնացքի գալով մեծ  
փոփոխութիւն առաջ եկաւ իջևանի մէջ. խորին լութիւնը, որնոր  
մինչև գնացքի գալը թագաւորումէր նորա մէջ, մեծ աղմուկի փո-  
խուեցաւ: Ի՞նչ ի՞նչ ձայներ ու բառբառներ չլսուեցան. նստարան-  
ները ծածկուեցան գոյն գոյն զգեստներով և դահլիճը, որնոր մէկ  
քանի բովէ առաջ շատ ընդարձակ տարածութիւն էր պատկերացը-  
նում, այժմ այնպէս նեղացաւ, որ շարժելու զրկմէ աեղ չմնաց:

Տեղիցս չվերկենալով դարձրի իմ հայեցքը դէպի գուռը և  
սկսեցի գիտողութիւններ անել ներս մանող ձանապարհորդների վե-  
րայ, որոնք ըստ մեծի մասին առողջութիւն ստոացած հիւանդներ էին,  
վերադառնալով զանսղան հանքային ջրերից, նոցանից բժշկութիւնը  
ստանալուց յետոյ:

Առհասարակ շոգեգնացքի ձանապարհորդները շատ հետագրքելի  
են, պատկերացնելով մի խումբ զանազան աղղերի, զանազան հա-  
սակի և սեռի, ամենատեսակ պաշտօնի, հասկացողութեան և լու-  
սաւորութեան, խառնուրդ լեզուների, այնպէս որ գիտող մարդու  
համար այդպիսի խառնիձաղանձ խումբը անչափ նիւթէ տալի նկա-  
տողութեան. բայց աւելի ևս հետաքրքրելի է շոգեգնացքի այն խում-  
բը, որնոր վերադառնումէ հանքային ջրերից: Մէկի երեսի վերայ  
դուք կարդումէք կատարեալ բաւականութիւն, միւսի վերայ հա-  
սակաւակն էք նկատում տեսնումէք մի նուազ կազմուածքով երի-  
տառարդ կին կամ օրիորդ, որնոր կարելի է ոչինչ թեթեութիւն չէ  
ստացել ջրերից, բայց որին բժիշկը հաւատացրելէ, որ ջրերու ներ-

դործութիւնը զդալի կը լինի մէկ քանի ժամանակից յետոյ, և ահա,  
այս քնքոյշ աղջիկը այդ յոյսով քաջալերուած, կարծես թէ ոյժ է  
ստացել, բայց նորա կիսաժապի մէջ տեսնումէք դեռ անկատար բա-  
ւականութիւն, մանումէ ներս մէկ զանդաղ հաստափոր մարդ, որն  
որ մի ամբողջ ամիս բաւական աղէ ջուր է խմել և փարէղ կացել,  
որ իւր գիրութիւնը կորցնէ, և ահա տես նորան. բաւական գոլով,  
որ ճշմարիտ շատ զրւանքայ<sup>1)</sup> և կարելի է մէկ փութից<sup>2)</sup> աւելի  
ևս պակասելէ նորա մարմնի ծանրութիւնից, աշխատումէ թեթև  
թեթև քայլերով առաջը տալ իւր ընկերներից մէկին, միւսին և  
աշխատումէ նոցա առջեր թեթևաշարժ երեւալ: Բայց այդ ջրերի  
վերայ գնացողները ամէնքը հօ հիւանդներ չեն. կան և այնպիսիները  
երիտասարդ աղջկերք և տղերք կամ հասակաւոր մարդիկ, որոնք իւրեանց  
ծնողաց և ազգականներուն ուղեկցումնն կամ գնումնն մենակ հան-  
քոյին ջրերը զուարձանալու կամ իւրեանց բախտը գտնելու: Ահա  
սոքա էլ վերադառնումնն: Տես այն կիսագեղցիկ աղջիկը, որնոր  
օգնումէ իւր մօրը ձեռի կալոցները<sup>3)</sup> տուն բերելիս. ահա նստե-  
ցան երկուսն էլ ու հանգստացան. մօր աչքերը պտտեցան ամէն  
կողմը, բայց խեղճ աղջկայ դէմքը, որի վերայ տպաւորուած էր արխա-  
րութիւն, մնաց անշարժ, նորա աչքերը նայումէին ներքեւ և կարծես  
որոնումէին մէկ գէմք, որնոր մնացելէր հեռու և որի վերստին տես-  
նելու յշյու նա կարծես բոլորովին կորցրելէր: Ահա մանումէ միւսը՝  
մէկ զեղեցկութիւն, որի գէմքի վերայ կարգումէք սաստիկ անբաւա-  
կանութիւն, նաև մի տեսակ չարութիւն: Ի՞նչ յոյսերով ուղեկից էր  
եղել սա իւր մօրը վեց շաբաթ առաջ, վստահացած իւր գեղեցկու-  
թեան վերայ, հաւասարի եղած որ նա մեծ յաղթութիւններ պիտի  
կատարէր. Ի՞նչ հնարքներ չեր սա զործ ածել, որ թէ իւր հա-  
գուստը, թէ մազերը, թէ զլիի զարդը այնպէս յարմարացնէր, որով  
նորա գեղեցկութիւնը աւելի կատարելութիւն ստանար ու աւելի  
զրաւէր երիտասարդների սրտերը: Բայց աւաղ. նորա յոյսերը ի զուր  
են անցկացել. չկարենալով յաղթել ուրիշներին, ինքն յաղթուած  
էր իւր անսափառութիւնից, և ահա բարկացած ու չարացած մարդ-  
կանց, աշխարհի վերայ, նա թողելէր առանց ուշադրութեան իւր  
զլիի զարդը ու մազերը, որոնք զգգուռած թափուումէին մասսմը

<sup>1)</sup> Le locomotif.

<sup>2)</sup> Φυντէ, la livre, <sup>3)</sup> պյե-10 livres, ոռուսի ծանրութեան չափ, մօտ  
13 օկա. <sup>3)</sup> le bagage.

նորա կիսամերկ ուսերի վերայ: Ահա այս զիտողութեան մէջն էի, երբ որ իմ դէմօւզէմը նստեց մէկ հասակաւոր կին, նիշար, բարձրահասակ, թռւես երեսով և սաստիկ ծաղկատար: Զնայելով որ այս կինը իւր դէմքով բոլորովին հակառակն էր այն գեղեցկագէմ աղջ կերանցը, որոնք իմ զիտողութեան առարկայ էին, բայց ես երեսա շուռ տուի այն քննոյշ էակներից և իմ բալոր ուշադրութիւնը դարձրի դէպի այն կինը: Ի հարկէ այս իմ արածը իմ ծաշակի պակասութիւնից չէր. գեղեցիկ դէմքը ունի և ինձ համար մեծ հրծուանք, բոյց այս անդամ ուրիշ զբացմունք շարժեց իմ մէջ այս կին: Մի գաղանի ձգողական զօրութեամբ քաշեց այս կինը ինձ դէպի իւրեան, սահպելով ինձ անտարբեր մնալ դէպի այն անշափ հետաքրքրելի բաղմութիւնը, որ ինձ շրջապատումէր, և այս գաղտնի ձգտումը ստիւ սից ինձ խօսք բանալ այն կնոջ հետ, որուն ուղեցի ես հետևեալ հարցմունքը գերմաներէն. «Արդիօք, պատուելի տիկին, գուք Ֆրանցինաբաղիցն էք զափ.» քաղցր ժամանով և սե աչքերը վառելով նայեց կինը ինձ վերայ և ոչինչ պատասխան չտուեց: Այն բոպէին մօտեցաւ նորան մէկ հասարակ հանգուած կին, որնոր սկսեց նորա հետ լեհէրէն խօսել. սա այն տիկնոջ աղախինն էր: Տէկինը հրամայեց նրան ջուր բերել խմելու: Նշանակումէ, մտածեցի ես, այս տիկինը լեհացի է, և որովհետեւ աղախինն ունի իւր հետ, պէտք է որ և մեծատուն լինի. շատ կարելի է որ գերմաներէն չէ հասկանում, վասն որոյ մինոյն հարցմունքը արի նրան ֆրանսերէն վերսախին ժամանուի կինը ուսերը շարժեց ինձ խմանելու, որ չէ հասկանում ինձ և վիրջապէս խնդրեց ինձ լեհ լեզուով որ ես խօսեմ նորա հետ լեհ հերէն, պատճառ որ նա ուրիշ լեզու չէ հասկանում: Ես էլ իմ կողմիցը մասամբ խօսքերով, մասամբ ձեռներով իմաց տուի նրան, որ լեհէրէն թէպէտ փոքր ինչ հասկանում մեմ բայց խօսել չեմ կարող: Հէնց այն էր որ ես իմ կարճ խօսակցութիւնը վերջացրի, յանհարծ տեսնեմ, որ կողքիս կանգնած է մէկ կարճահասակ հաստլիկ պարոն, բոլորակ երեսով, վառվուն աչքերով, կարմիր թշերով, վայելուչ հաղուստով, մէկ տափակ ֆէսի ձևով ոսկեթել սե թափշեայ զինարկով և ձեռին ձիգ ծխաքարշ (չիրութ) բունած, միւս ձևն էլ զրպանումը դրած:

«Փ՞նչէք կամենում, պարոն, հարցրեց սա ինձ գերմաներէն, այս կինը որի հետ գուք խօսումէիք, իմ կինն է, երեխ նա ձեր լեհ զուն չհամկացաւ. կարելի է ես բաւականութիւն տամ ձեր խնդրքին»:

— Կատ շնորհակալեմ, պարոն, ձեզնից — պատասխանեցի ես — ես ցանկանում էի խմանալ, արդեօք դուք ֆրանցէնսբագիցն էք զալիս, թէ ուրիշ հանքային ջրերից: —

«Ուղիղ Ֆրանցէնսբագից, պատասխանեց նա, և պէտք է ասեմ, որ մենք շատ բաւական ենք այդ ջրերից:»

Այս պարոնի զուարթ երեսը, ուրախ ու բաց դէմքը և նորա ամէն շարժմունքը ու նորա արտաքին ձեր կասկած չցցեցին իմ մէջ, որ նա պիտի լինէր լեհ հարուստ կալուածատէրներից: Իւր ասածին վերայ աւելացնելով մի քանի զովասանական խօսք հանքային ջրերու մասին, յանկարծ խօսակցութեան թելը կտրեց և աչքերը չըելով ինձ վրայ, ասաց.

«Վերեցէք ինձ, պարոն, գուք հօ հայ չէք:»

Ինձանից պատասխան չստանալով և խօսքերի տեղ նշմարելով իմ երեսի վերայ ժպիտ, փոքր ինչ ձայնը բարձրացնելով կրկնեց՝ «գուք անպատճառ հայ պիտի լինիք, ասէք ինձ, այդպէս չէ:»

— Պարոն, պատասխանեցի ես, ներէք ինձ, թէ ես ձեր հարցմանքը անպատճառ մթողնեմ, նորա համար որ ես սովորութիւն չունիմ, մանաւանդ ժանապարհորդութեանս ժամանակ, ամէն ինձ պատահողին և անծանօթ մարդուն յայտնել իմ ով լինելը: —

«Այս շատ լաւ է և այդպէս էլ պէտք է, պատասխանեց ինձ անծանօթ պարոնը, բայց ես վերսախին հաստատումեմ, որ գուք հայ պիտի լինիք:» Եւ այս հաստատաբար արտայայտած խօսքերը մի այն պիտի ուրտիսութեամբ և բաւականութեամբ ասաց, որ ես աւելորդ համարեցի ծածկել իմ աղդայնութիւնը և նրան պատասխանեցի.

— Պարոն, ինչպէս երեւումէ, գուք պիտի զիմագէտ լինիք և այդ պատճառով ես կասեմ ձեղ, որ գուք չէք սխալուում. Ճշմարիտ է, ես հայ եմ:

«Այս, ուրեմն իմ հայրենակիցն էք, բարե՛ ձեղ, իմ հայրենակից, հարիւր ու հազար բարե՛, ասելով հողերուխ խնդութեամբ այս խօսքերը իւր ձեռը մեկնեց ինձ: Ես վերկացայ տեղիցս, ուրախ տուի նրան ձեռքս և մէկմէկու ձեռները պինդ սխմելով, բարեցինք խնդրով: Նորա ծառան, որին նա իւր հետ ունէր և նորա ետևիցը կանգնած էր, բերեց նորա համար մէկ աթու, որի վրայ նա նստեց և մէր մէջ սկսուեցաւ սրտանց խօսակցութիւն: Ամէնից առաջ նա ծանօթացրեց ինձ իւր կնոջ հետ, ասելով «սա ես հայ է, բայց տարաբախտաբար չէ կարող ձեղ հետ խօսել, պատճառ որ

բացի լեհերէնից ուրիշ ոչ մի լեզու չղիտէ. մասամբ և ես իմ կնոջ պէս տարարախտ եմ, որովհետեւ չղիտեմ հայերէն, որ հայրենակացիս հետ հանդիպած, կարողանալի նորա հետ իմ հայրենական լեզուով խօսել. բայց, պարո՞ն, դուք ինձ կը ներէք, երբ որ կիմանաք հայրենախն լեզուիս չղիտենալու պատճառը. միայն հաւաստի կացէք, որ ես ազգով, հոգւով, մոքով ու սրտով հայ եմ և կը մնամ միշտ հաւաստարիմ իմ ազգայնութեանը:»

Այս խօսքերը նա արտասանեց այնպիսի զգացմունքով և եռանգով, որ բոլորովին զրաւեց իմ սիրտը: Բայց էլի ինձ համար հետաքրքրելի էր զիտենալ, թէ ինչպէս իմացաւ նա իմ հայ լինելը: Այս հարցին ստացայ հետեւեալ պատասխանը՝

«Պարո՞ն, անուանելով ինձ դիմագէտ, դուք ինձ մէկ յատկութիւն սեպհականեցիք, որնոր ես չունիմ: Ճշմարիտ է, թէպէտ ձեր դէմքը դոյց է տալիս, որ դուք հարաւային երկրից պիտի լինիք, բայց ձեր հայ լինելը ես չիմացայ ձեր երեսին նայելով, այլ սկզբումը մի ներքին ձգտումն զգացի զէսփի ձեզ, մի անմեկնելի զօրութիւն քաշեց ինձ զէսփի ձեզ և որպէս թէ մէկ զաղտնի ճայն ասումէր ինձ. քո առաջը նստած է քո հայրենակիցդ, քո հայրենիքի որդին, և երբ որ այսպիսի զգացմունքով շարժած նայեցի ես ձեր զէմքին, ձեր սե աչքերուն, այն ժամանակ զորդ որ ձեր երեսի վրայ հայ կերպարանք կարդացի: Տեսնումէք, պարո՞ն ի՞նչ է նշանակում հայ լինելը. ի՞նչպէս նորա սիրտը մնացելէ ամբողջ, ի՞նչ իստակ արիւն է հայի արիւնը, ի՞նչ նուրբ զգայարանք ունի հայն. ի՞նչպէս խսկոյն զգաց հայի սիրտը իւր հայրենակցին տեսնելով: Ա'խ, չղիտեմ, ի՞նչպէս շնորհակալ լինիմ ձեզնից այն ուրախութեան համար, որ ինձ պատճառեցիք. զիտէք, պարո՞ն, քանի տարի է որ մեծ փափառ ունէի տեսնուելու իմ հայրենակցի հետ, որ լինէր մեր մօր Հայաստանի կողմերից, իւր հետ բերէր Հայաստանի օդը, Հայաստանի շունչը: Ահա, ես տեսնումէմ ձեզ և կարծես, ինքս տեղափոխուել եմ այն սուրբ տեղերը, որոնք մինչեւ այժմ վկայ են մնացել մեր անցեալ փառքի և մեծութեան՝ Արարատը, սուրբ Խջմիածին, Անի, Երասխ գետը: Ա'խ, ի՞նչպէս երջանիկ էք, որ դուք այդ տեղերին մօտիկ էք և կարող էք նոցա միշտ կամ շուտ շուտ տեսնել:»

Այս զգացմունքով լի և սրտից բղխած խօսքերն ասելով, պարո՞նը շտապով նայեց իւր ժամացոյցին և նեղանալով ասաց՝

«Ա'խ, մեզ մնում է միասին լինել միայն ութը բոպէ: Ես մի

խնդիրք ունիմ ձեզ մօտ և պիտի խօսք տաք որ կը կատարէք նուրան. ես այս կարծ ժամանակով ձեզ հետ տեսնուելով չեմ բաւականանում: Դուք պիտի ինձ խօսք տաք, որ ձեր ամառուան ճանապարհորդութիւնից վերադառնալիս ինձ այցելութիւն անէք իմ կալուածքի մէջ, որնոր հեռու չէ Լէմբէրդ քաղաքից: Դուք կը մնաք ինձ մօտ մի քանի օր, ես ձեզ համար կը ժողովնմ մեր հարեան հայ կալուածատէրներուն, որոնք ինչպէս և ես, մեր երևելի ու անմուաց Անի քաղաքից գաղթած հայերի սերունդն են, և որոնք անչափ ուրախ կը լինին ձեզ հետ տեսնուելու:»

Ասելով այս, խնդրեց նա ինձ, որ ես տամ նրան իմ յիշատակագիրը և նորա մէջ նշանակեց նա մանրամասն իւր հասցէն<sup>1)</sup> և աւելացրեց այս խօսքերը՝ «կը զաք Լէմբէրդ քաղաքը, որտեղ կը մնաք մէկ օր, այնտեղ կան նմանապէս մեր հայերից շատ նշանաւոր մարդիկ, այն տեղից հեռազիր կը խփէք ինձ, իմացանելով ինձ, թէ որ շողեգնացքով զայռ կը լինիք. Երկաթուղիի իջևանումը, որտեղից իմ կալուածքը մօտ երկու ժամ հեռու է, ձեզ կը սպասէ իմ կառքը որնոր իջևանից կը բերէ ձեզ ինձ մօտա:

Ի հարկէ այսպիսի հրաւերը ես ընդունեցի շնորհակալութեամբ ու մեծ ուրախութեամբ:

Յանկարծ լսուեցաւ առաջին զանդի ճայնը: Վեր կացան իւրեանց տեղերիցը ճանապարհորդները: Պարո՞ն բողդանովիչի կինը, որնոր ամբողջ խօսակցութեան ժամանակը նորա մարդու հետ, թէպէտ մեր խօսակցութիւնը, որ զերմաններէն էր, չէր հասկանում: Բայց սրտումը խնդում էր, այս զանդի ճայնի վերայ նմանապէս տեղիցը վերկացաւ. վերկացայ և ես և իմ ցանկութիւնը՝ օգնական լինել նրան իւր ձեռի բագաժը դուրս տանելու՝ ի զուր էր, որովհետեւ նորա աղախինը և ծառան իւրեանց պարտաւորութիւնը ճշտաբար կատարեցին, և հազիւ կարողացայ ես պարո՞ն բողդանովիչին մի քանի խօսք ասել, որ տուին երկրորդ զանդը: Շտապով բարեաւ մնաս ասինք միմեանցը, ամենաջերմ համբոյր տալով մէկմէկու և ես իսկ որդիական զգացմունքով և ջերմեռանդութեամբ համբուրեցի այս պատուական կնոջ

1) Այս պարո՞նը էր՝ Գրիստոփ Բողդանովիչ, Զուրկով գեղի կալուածատէր Գալիսիայումը: Լէմբէստանի մէջ զաղթած հայերը իւրեանց հայ անունները և ազգանունները լինացրել են, մանաւանդ ազգանունների վերջաւորութիւնը պիտի փոխելով:

ձեռը և տարայ նորան կառքը նստացրի: Մէկ վայրկեան՝ և թռաւ փնչվինչալով շոգեգնացըը:

Ճշմարիտ է, իջեանը դատարկուեցաւ և ստացաւ առաջուան զրութիւնը, բայց ես առաջուան պէս էլ չէի միայնակ: Իմ առջեւ կենդանի պատկերացած էին այս պատուական ու աղնիւ դէմքերը, որոնք այն օտարութեան մէջ վերադացրին ինձ դէպի իմ հայրենակիցները և իմ առջեւ բաց արին մեր անցեալ ժամանակուան յիշ շատակարանը: Իմ միտքը զբաղուեցաւ ամենատեսակ մտածմունքներով մեր ազդի անցեալ և ներկայ դրութեան մասին և երեակայութեանս մէջ ես թերթել սկսեցի մեր պատմութեան անցքերը. ամենաջերմ զգացմունքներ շարժեցին սիրտս դէպի մեր հայոց այն կտրուած ճիւղի վիճակը, որնոր հնագ հարիւր տարի առաջ գաղթելէր օտար երկիրներ, այն է՝ լեհաստան, չունդարիա և Ավստրիայի ուրիշ մասերը, նմանապէս և Մոլդավիա և Վալախիա, դ. և ազան տառապանքներից և ամէն տեսակ թէ բնական թէ քաղաքական վրդովմունքներից ստիւպուած լինելով այդ գաղթականութիւնը անել, իմ ականջիս մէջ շարունակում էին հնակ այն սրտաշարժ խօսքերը, որով Պարսն բողքանովիչը դիմեց ինձ. ոռչ թէ ձեր դէմքիցը ձանաչեցի, թէ դոք հայ էք, այլ սիրտս զզայ ձեր հայ լինելը և քաշեց ինձ դէպի ձեզ: Այն ժամանակ հասկացայ ես, թէ ինչ զօրութիւն էր, որ ե. իմ սիրտը ձեզ սկզբումը դէպի այն անծանօթ կինը—այն, հայի սիրտն էր, որնոր քաշեց դէպի հայի սիրտը:.....

Արդեօք այս անցքը, մտածում էի ես, ապացոյց չէ մեր ազդի ամրող սկահպանուելուն: Ոչ արդեօք մէկ ազդի անդամների միմեանց հետ միաւորումէ միւնցն կապը, որնոր միաւորումէ մէկ լնտանիքի անդամներին մէկմէկու հետ: Արդեօք այս դիովուածքը չէ նման այն սրտաշարժ դիպուածքներուն, ինչպէս զանազան պատմութիւններից իմանումնք, որ մէկ ծնողաց որդին ամենափոքրիկ հաստկումը կորչելով ծնողաց տանիցը և մեծանալով օտար ազդի մարդկանց ձեռին, օտար սովորութիւններ ստանալով, օտար լեզու սեպհականելով, օտար ձայներ լսելով ու բոլորովին ձանաշելով իւր սեպհական ծնողացը և տունը, վերջապէս որևէ իյէ հանդամնքներով հանդիշապումէ քսան կամ աւելի տարիներից յետոյ իւր ծնողացը, որոնք նմանապէս վաղուց իւրեանց որդին կորած են համարում և նորան բոլորովին մոռացած են, և այն հանդիպելիցը նոյա սրտերի մէջ մէկ առանձին զգացումն է ծագում, մէկ ձգողութիւն դէպի միմեանց և

այդ մէկմէկու կորցրած ու մոռացած արիւնակիցները վերջապէս ձաւ նաշումն ու գտնումն միմեանց:

Կան բնութեան մէջ զաղանի կապեր, գօրութիւներ, որոնց ներգործութիւնը շատ անգամ զիմակաւորվումէ, ճնշուած լինելով զանազան կողմնակի հանգամանքներից, բայց երբ որ այս վերջինները գագարում են, այն ժամանակ այն պարզ ու նուրբ զօրութիւնները երեան են գուրս գալի: Այս զօրութիւնները ներգործումն ինչպէս նեղ ասպարիզի մէջ, որպիսի են մէկ ընտանեաց անդամները, այն պէս և այն ընդարձակ ընտանիքի մէջ, որ ազդ ենք անուանում: և երբ են նկատվում նորա անդամների մէջ համակրութիւն և այս պիսի ձգտողութիւն դէպի միմեանց. ի հարկէ՝ երբոր այն ազգը պահանուել է ամբողջ ու իստակ և չէ խառնուել ուրիշների հետ, և ինչպէս պ. Բողդանովիչը ասաց, երբ այն ազդի սիրտը մնացել է ամբողջ, նորա արիւնը՝ իստակ և նորա չգայարանքը՝ նուրբ: Այս եղանակութիւնը բերեց ինձ այն միսիթարիչ հետևանքին, որ և մեր ազդը հենց այսպիսի ազգերից մէկն է: Նթէ չէ, ապա ուրեմն ինչպէս մէկնենք մենք այն իրողութիւնը, որ մենք, հայերս, չնայելով այն անմիւտ տառապանքներին, աղմուկներին, հալածանքներին, բանակալութեանցը, որոնք պատճառ գարձան մեր թագաւորութեան անկման և ցիրուցան արին մեզ աշխարհի զանազան կողմերը, ուր որ զնացել ենք, պահպանել ենք մեզ լիովին, մնացել ենք արինով ու հոգւով հայ: Ուրեմն, ինչքան հաստատութիւն ու զօրութիւն, ինչ ուժգին հոգի կայ հայի մէջ: Եւ արդեօք սորու հաստատութիւնը չէ այն, որ 500 տարուց աւելի օտարութեան մէջ գաղթած ազդի մէկ մասի սերունդը շրջապատած լինելով ամենայն տեսակ օտարութեամբ, մինչև իւր հայրենական հաւատն էլ փոխած, հանդիպելով յանկարծ ու անակնկալ մի օտար տեղումը, առաջին անգամ, մէկ անձանօթ հայու հետ, որ նմանապէս իւր բուն հայրենիքից դուրս է ասպրում, համազգումէ նրան, ձանաշումէ նորան, դէմէ զալիս նրան տարածած բազու կներով ու նրան զրկախառնումէ:.....

Ահա այս հաճոյական մասձողութեանց մէջ էի, որ եկաւ իմ սպասած շոգեգնացը և տարաւ ինձ դէպի իմ ցանկացած տեղը:

Ի հարկէ, ես կատարեցի պ. Բողդանովիչի լինդիրը, որնոր դարձաւ և իմ սրտիս խորին փափաղը:

Այս ծանօթութիւնը ինձ համար նշանաւոր էր և այն կողմից, որ պատճառ դարձաւ ինձ մօտիկ ծանօթանալու դաշիսխայի և մանաւանդ Մոլգավիայի հայերի հետ, որոնց ես հետեւ արիներու մը Եւրոպա ճանապարհորդելու ժամանակը անդադար այցելութիւն էի անում և որոնց հետ ամէն անդամ տեսնուիլը ինձ համար մեծ բերկրանք էր: Եթէ ես կեանքիս մէջ ունեցել եմ քաղցր ու հոգեզուարձ օրեր, նոցանից են և այն օրերը, որ ես անցեմ կացրել մեր ազգի այդ կտրուած և օտարութեան մէջ գաղթած Ճիւղի մէջ, որնոր մանաւանդ Մոլգավիայի և Վալախիայի մէջ պահպանուելէ ամբողջապէս, հաստատ ու անփոփոխ պահպանելով և մեր հայրենական եկեղեցին և լեզուն, նաև մեր նահապետական սովորութիւնները:

«ՄԵԾ-ԻՇԽԱՆ ՓՈԽԱՐՔԱՆ բարեհաճեցաւ վաւերացնել այս կանոնագրութիւնը»

Գլխաւոր Վարչութեան Մեծաւոր

Գեներալ-Լեյտէնանտ Սուբսէկտ

1880 յունուարի 31  
Թիֆլիդ

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻԶԻ ԲՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅԵՐԵՆ ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ

### I

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԻԶՈՑՆԵՐԸ

§ 1. «Թիֆլիզի Ընկերութիւնը հայերէն գրքերի հրատարակութեան հիմնվում է թիֆլիզում և նպատակ ունի հրատարակել հայերէն լեզուվ թէ լիքնուրոյն և թէ թարգմանած գրքեր:

Ծանոթ Ընկերութեան հրատարակութիւնները և թարգմանում են տպագրութեան ընդհանուր կանոնադրութեանց:

§ 2. Ընկերութեան կազմովներն են՝ իսկական, մշտնջենաւոր, պատույ և աշխատակից-անդամք: Անդամ կարող են լինել երկու սեռից: Անգամների թիւը սահմանափակուած չէ:

§ 3. Ընկերութեան հասոյին է՝ ա. տարեկան և միանուագ վճարները. բ. Ընկերութեան տպագրութեանց վաճառմունքից գոյացած գումարը և գ. թատրօնական ներկայացումներից, կոնցերտներից, հրապարակական դասախոսութիւններից և այլ՝ օրէնքով թոյլ տուած ձեռնարկութիւններից կայացած արդիւնքը:

### II

ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ, ՆՈՅԱ ԻՐԱԿՈՒՆԻՅՆԵՐԸ ԵՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

§ 4. Իսկական, մշտնջենաւոր և աշխատակից-անդամ ընտրում է Վարչովութիւնը, իոկ պատույ անդամ ընտրում է Ընդհանուր Ժողովը:

§ 5. Պատույ անդամ ընտրվում են այն անձինքն, որոնք իւրեանց անհական արժանաւորութեամբ կամ իւրեանց հասարակական դրութեամբ կարող են առանձնապէս գույտ տալ Ընկերութեանը:

§ 6. Աշխատակից՝ անդամ ընտրվում են այն անձինք, որոնք իւրեանց աշխատանքով կամ գիտութեամբ կարող են Ընկերութեանը օդաւելինել. Աշխատակից անդամները ընտրվում են մի տարով:

§ 7. Այն անձինք, որոնք միանուագ նույրում են Ընկերութեանը ոչ պակաս քան հարիւր բուրի, կարող են մշտնջնաւոր անդամ ընտրուել.

§ 8. Խակական անդամը վճարում է տարեկան վեց բուրի:

Ծանօթ. Այն խակական անդամը, որ վեց ամսուայ ընթացքում չէ վճարել իւր տարեկան վճարը, համարվում է Ընկերութեան անդամակցութիւնից հրաժարուած:

§ 9. Ընկերութեան ընդհանուր ժողովների մէջ ներկայ գտնուող ամէն կարգի երկսեռ անդամները ընտրողական ձայն ունին և ընտրելի են Ընկերութեան ամէն պաշտօնների համար:

### III

#### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՁԻՆՔ ԵՒ ՆՈՅՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

§ 10. Ընկերութեան գործը կառավարում են՝ ա. Վարչութիւնը և բ. Խմբագրական մասնաժողովը:

§ 11. Վարչութեան պաշտօնական անձինք են՝ ատենապետ, փոխ-ատենապետ, երկու անդամք, ատենապետի, զանձապահ և զրապահ:

§ 12. Վարչութիւնը վարում է Ընկերութեան անտեսական մասը, քննում է նորա դրամական հաշիները և գումարը, պաշտպանում է, ուր պէտք է, նորա շահերը, պատրաստում է տարեկան ընդհանուր հաշինը Ընկերութեան աշխատաւթեանց, կարգադրութեանց, կայքի և դրութեան մասին, ներկայացնում է ծախուց հաշինը մօտաւրապէս և հսկում է Խմբագրական մասնաժողովի ընդունած գրքերի տպագրութեան մասին. Վարչութեան կողմից են լինում բոլոր բանակցութիւնները որենցէ հաստատութեանց և անձանց հետ:

§ 13. Վարչութեան ատենապետը հսկողութիւն ունի, որ ծշտութեամբ կատարուին սոյն կանոնադրութիւնը և ընդհանուր ժողովի, Վարչութեան և Խմբագրական մասնաժողովի վճիռները:

§ 14. Ատենապետի բացակայութեան ժամանակ նորա պաշտօնը վարում է փոխ-ատենապետը:

§ 15. Վարչութեան ատենապետը կազմում է Ընդհանուր ժողովի և Վարչութեան նիստերի արձանագրութիւնները. Նա վարում է դիւանական դործերը և պահում է գրութիւնները:

§ 16. Վարչութեան գանձապահը վարում է Ընկերութեան դրամական գործերը և պահում է հաշիները. Նա ընդունում է բոլոր դրամական վճարները և նուերները, ծախսեր է անում Վարչութեան կարգադրութեամբ,

գանձապահը կաղմում է տարեկան մանրամասն հաջիւ գումարների և նույնից մասին:

§ 17. Ծախսերի համար գանձապահը կարող է իւր մօտ ունենալ մինչև հարիւր բուրի. Սնացեալ բոլոր զումարը պահում է տեղական բանկերից մէկի մէջ յանուն Ընկերութեան ըստ որոշման Վարչութեան. Դրամական արժեթղթերը պահում են գանձապահի մօտ:

§ 18. Գրապահը պահում է Ընկերութեան դրամերը և հրատարակութիւնները:

§ 19. Վարչութեան մէջ պէտք է կետրոնանան բոլոր գրադրութիւնները:

§ 20. Խմբագրական մասնաժողովը կայանում է եօթ անդամներից:

§ 21. Խմբագրական մասնաժողովը ընտրում է տպագրուելիք հեղինակութիւնները և նշանակում է հեղինակներին կամ թարգմանիչներին վարձատրութիւն նոցա աշխատաւթեան համար. Առանց սորա վճուի ոչ մի զիրք չէ կարող հրատարակուել Ընկերութեան կողմից:

§ 22. Խմբագրական մասնաժողովը իւր մէջից ընտրում է ատենապետ և ատենապիր:

§ 23. Վարչութեան և Խմբագրական մասնաժողովի անդամները ընտրվում են երկու տարով, բայց առաջի տարուայ վերջը իւրաքանչիւրից դուրս են գնում երեքը վիճակով և նոյա տեղը ընտրվում են նորերը. Երկորդ տարին դուրս են գնում մնացած երեքը և նախազաները:

§ 24. Բոլոր վերոյիշեալ պաշտօնատար անձանց ընտրութիւնը կատարվում է Ընկերութեան Ընդհանուր ժողովում զատկնի քուէարկութեամբ. Ծանօթ. Ընտրուած համարվում են այն անձինք, որոնք կըստանան ներկայ եղող անդամների ձայնների մնամանութիւնը:

§ 25. Երկու տարուց յետոյ նոյն պաշտօնատար անձինք վերընտրելի են նոյն պաշտօնների համար:

§ 26. Ընկերութեան Վարչութեան և Խմբագրական մասնաժողովի յարաբերութեանց ձեզ որոշվում է փոխադարձ համաձայնութեամբ. Խսկ նորանց մէջ պատահած բոլոր տարածայնութիւնները լուծում է Ընդհանուր ժողովը:

### IV

#### ՎԱՐՉՈՒԹԵԱՆ, ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՆԽՏՄԵՐԸ

§ 27. Վարչութիւնը և Խմբագրական մասնաժողովը զումարվում են ըստ պահանջման հարկի և նոյա հրաբում են իւրեանց նախազաները:

§ 28. Վարչութիւնը և Խմբագրական մասնաժողովը կազմում են իւրեանց նիստերի արձանագրութիւնները, որոնք ստորագրում են բոլոր ներկայ եղող անդամները:

Ծանօթ. Վարչութեան և Խմբագրական մասնաժողովի նիստերը կայացած են համարվում, երբ ներկայ են ոչ պակաս հինգ անդամից:

§ 29. Ընդհանուր ժողովները լինում են՝ տարեկան և արտաքոյ կարգի և հրաւիրվում են լրացրաց մէջ տպած յայտարարութեամբ:

§ 30. Արտաքոյ կարգի ժողովները հրաւիրվում են ըստ պահանջման հարկի կամ ոչ պակաս քանուհինդ անդամոց առաջարկութեամբ:

§ 31. Տարեկան ընդհանուր ժողովում, ա. Վարչութեան ատենադպիրը ներկայացնում է ընդհանուր հաշիւ ընկերութեան լրացրած տարուայ ախտատութեանց, կարգադրութեանց, կայքի և դրութեան մասին, բ. ընտրվում են պաշտօնատար անձնուք, գ. հաստատվում է Վարչութեան ծախուց նախահաշիւը և դ. ընտրվում են պատւոյ անդամները:

§ 32. Ընդհանուր ժողովը ընտրում է իւր համար մի նախազահող:

§ 33. Ընդհանուր ժողովը կայացած է համարվում, երբ ներկայ եւ դող անդամների թիւը թիվից զանուող անդամների թուի  $\frac{1}{5}$ -ից պակաս չէ:

§ 34. Եթէ հրաւիրուած Ընդհանուր ժողովը չկայանայ, նոր Ընդհանուր ժողովը կայացած կը համարուի, մինչեւ անդամ եթէ ներկայ եղող անդամների թիւը որոշեալ թուից պակաս է.

§ 35. Ընդհանուր ժողովում, նոյնպէս և Վարչութեան և Խմբազրական մասնաժողովի նիստների ժամանակ խնդիրները լուծվում են ձայների բազմութեամբ: Խոկ ձայների հաւասարութեան դէպքում նախապատիւ է համարվում ատենապետի կողմը:

Ծանօթ. Ներկայ Կանոնազրութեան փոփոխութեանց որոշմունքները օրինաւոր համարելու համար պահանջվում է ներկայ եղող անդամների երկու երրորդ ձայների առաւելութիւնը: Այս որոշմունքը ները գործ դնելու համար պէտք է Կովկասեան Փոխարքայի թոյլտվութիւնը:

## V

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

§ 36. Ընկերութիւնը ունի իւր կնիքը հետեւեալ մակազրով: «Թիֆովի ընկերութիւն» հայերէն գրքերի հրատարակութեան»:

§ 37. Ընկերութիւնը ամէն տարի ներկայացնում է թիվլիզի նահանգապետին իւր անցած տարուայ գործունէութեան հաշուի երկու օրինակ ռուսերէն լեզուով:

§ 38. Ընկերութեան գործունէութեան ընդհատելու միջոցին, այդ դէպքում գումարուած արտաքոյ կարգի ժողովը որոշում է Ընկերութեան բոլոր կայքը յանձնել Հայոց հոգեոր դպրոցներից մինին:



4582

1p

0003628

2013

ՀՀ Ազգային գրադպրոց



NL0003628

